

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարու
ելաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Լ Ր Ա Գ Ի Ր Ը

1903 թւին

12 ամսվանը	10 ռուբլի
11 »	»
10 »	9 »
9 »	8 »
8 »	»
7 »	6 »
6 »	»

Մնացածները ամսական 1 »

Եւրոպայում 30 ֆր., Ամերիկայում 6 դոլլար,

Պարսկաստանում 10 ր.

Հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուս-պարսկական դաշնագիրը. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդական ներկայացուցիչները
Սև քաղաքում. Նամակ Պետերբուրգից. Նա-
մակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
մակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. — Գեղարուեստը հայերի մէջ.

ՌՈՒՍ-ՊԱՐՏՎԱԿԱՆ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԴԱՇ- ՆԱԳԻՐԸ

Հեռագիրը մեզ հաղորդել էր, որ Ռու-
սաստանի և Պարսկաստանի մէջ եղած ա-
ռևտրական դաշնագիրը փոխվեց և ստա-
ցաւ նոր խմբագրութիւն: Այն դաշնագի-
րը, որ գոյութիւն ունէր այդ երկու պե-
տութիւնների մէջ աւելի քան եօթնամ-
սուն տարվայ ընթացքում, համարվեց
կորցրած իր ժամանակամիջոցը և փոխա-
րինվեց նորով:

Մինչև այժմ այն ապրանքներից, որոնք
արտահանվում էին Պարսկաստանից Ռու-
սաստան ներմուծելու համար, վերցնվում
էր ապրանքի արժէքի հինգ տոկոսը: Դա
չառ հասարակ և միօրինակ մի չափ էր,
սակայն գործնական կեանքի մէջ առաջ էր
բերում բաւական դժուարութիւններ, ո-
րովհետեւ թէ Ռուսաստանը և թէ Պարս-
կաստանը բացի միմեանց հետ ունեցած
յարաբերութիւններից, ունէին առևտրա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ

I
Հայերու խոսակցութիւններու և մանա-
ւանդ մեր պարբերական հրատարակութիւն-
ներու մէջ մի 15—20 տարի կայ որ հեղա-
րուեստը բառը կը յեղեղուի բաւականին յա-
ճախ: Մենք ունեցանք և մինչև այսօր էլ ու-
նինք նոյն-իսկ «Գեղարուեստական» իբր թէ
զուտ հրատարակութիւններ... Ինչպէս, պատ-
ճառներ կան, որ մենք այս դարասկիզբի հըս-
կայական առաջադիմութեան օրերը քննելու,
քննելու մը հետեւին հետու, չենք կարողացել ի-
րապէս, ճշմարիտ գեղարուեստական մի հան-
դէս ունենալու:

Այդ պատճառները իմ կարծիքով հետեւեալ-
ներն են. 1) Մենք այդպիսի գործի մը համար
նոյն-իսկ հեռավոր պատրաստակամութիւն ու-
նեցող մարդ չունինք ապագայէ վրա. 2) Մենք
մեր շատ մի դարերէ ի վեր ապրած կեանքով
բոլորովին հող չունինք պատրաստած այդպի-
սի մի բանի համար. 3) Մենք զարգացման
(ժամանակակից հասկացողութեամբ) ստոր ա-
տիմանի վրա կանգնած ժողովուրդ ենք.
4) Մենք հալածական, անհանգստացած, և

կան յարաբերութիւններ և ուրիշ երկըր-
ների հետ, որոնց համար նշանակութիւն
ունենին մարտերի այս ու այն չափը և
աստիճանը:

Այժմ մշակված է ամբողջ մի աղիւսակ
մարտերի չափերի համար: Թէ Ռուսաս-
տանից Պարսկաստան արտահանվող և թէ
Պարսկաստանից Ռուսաստան ներմուծվող
ապրանքները մի անգամ կենթարկվեն
մարտի և այնուհետև ազատ շրջանադար-
ձութիւն կանեն վաճառանոցներում: Իսկ
մինչև այժմ Պարսկաստանում ապրանք-
ները ոչ միայն այն ժամանակն էին տուր-
քի ենթարկվում, երբ ներմուծվում էին
երկրի մէջ, այլ և երբ նրանք անցնում
էին մի գաւառից միւրի: Այժմ այդ բոլոր-
քին վերջ դրվեց և մի փոքր բացառու-
թիւն մնաց մի քանի ուղիների վերաբե-
րութեամբ, ինչպէս է Րեշտ-Թէհրանեան
խճուղին:

Ներկայումս դեռ չեն սահմանված սա-
կազներ բոլոր ապրանքների համար. ուս-
տի դաշնագիրը թոյլ է տալիս, որ այն
ապրանքների համար, որոնք դեռ չեն
նախատեսված ներկայ դաշնագրում՝ մարտ
վերցվի դիւրացրած չափով, այն է այն
չափով, որով Ռուսաստանը ամենանպաս-
տաւոր կերպով կապվել է ուրիշ պետու-
թիւնների հետ:

Ժամանակը և փորձը ցոյց կը տան, թէ
նրան յարմար են գործնական տեսակէ-
տից ներկայ դաշնագրի մանրամասնու-
թիւնները: Մեր կովկասեան վաճառական-
ների մի որոշ թիւը զբաղված է ռուս-
պարսկական առևտրի գործերով և կարող
է իր սեփական փորձով ստուգել նրա
տուած արտօնութիւնները և զգալ նրա
անկատարութիւնները: Անկասկած, արած
դիտողութիւնները հարկաւոր կը գան այն
գէպերում, երբ տեղի կունենայ դաշնա-
գիրների վերաբնութիւնը: Իսկ ներկայումս
առևտրական դաշնագիրները յաճախ փո-
փոխութիւնների են ենթարկվում և մի
տեղ առաջ եկած փոփոխութիւնը ազդում
է և միւսների վրա: Ռուս-պարսկական
մինչև այժմ անշարժ դաշնագիրը այսու-
հետև կենթարկվի այն վիճակին, որի մէջ
գտնվում են ուրիշ պետութիւնների հետ
ունեցած դաշնագիրները, այսինքն պարբե-
րական փոփոխութիւնների ժամանակակից
պահանջների և հանգամանքների համա-
ձայն:

ստուար մեծամասնութեամբ աղքատ և հետե-
ւաբար զուտ զբաղմի culte-ը ունենալու բո-
նադատուած ժողովուրդ մ'ենք, վայրափախու-
նալով իսկ առևտուրէններու ժողովրդական
ընդունակութիւններն ալ կարգին պահած լի-
նելու: Թափառականութիւնը և պապերի հողից
վտարված ժողովուրդի մեր անհայրենիքու-
թիւնը, մեզ բրած են ճիշտ սա մարդոց պէս,
որոնք վարձու տուններու մէջ կը բնակին
միշտ և որոնց բոլոր բովանդակ գեղեցկութիւն-
ն և յարմարութիւնները (եթէ զրանք գտնվին էլ)
կը դադարին գոյութիւն ունենալէ հէնց այն
բօպէից, երբ կը մտածվի, թէ այդ պատե-
րը իրենցը չեն... և մի օր իրենց պիտի
ասեն զգուշացու իւր ընտանիքը...

Բայց գեղարուեստը ընկերական կեանքի
աղին է, շատ զբաղումներու, շատ գործերու
աստուար գեղարուեստն է: Գեղարուեստը ա-
մեն կատարելագործութիւններու հիմն, պա-
տուանդանն է: Առանց գեղարուեստի քաղա-
քակիրթ կեանք չը կայ, ուստի և առանց գե-
ղարուեստի՝ մարդ, և հարկաւորաբար էլ՝ ազգ
չէ կարող լինել:

Արամական մերկութեան վիճակի և հոգե-
կան, մտաւոր զարգացման ամենատարր աստի-
ճանի վրա գտնվող, կոյս անտառներու բնիկ,
կղզեցի վայրենիներն անգամ ունին իրենց պե-
ղարուեստը:

Գեղարուեստը մարդու ամենապիւր ու

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒՄՆԵՐԸ ՍԵՒ ԲԱՆԱՏԻՈՒՄ

Նոր տարվայ առաջին ամսում տեղի ունե-
ցաւ զանազան տեսակի ինք զուարճութիւն
Դիմումների 30-ին, տիկ. Ան. Գալանթարի նա-
խաձեռնութեամբ կազմակերպված մանկական
առևտուր, որի մասին արդէն գրել եմ,—յուն-
վարի 6-ին յաջորդեց երկրորդ մանկական տօ-
նը՝ տիկ. Զիթովայի նախաձեռնութեամբ. այդ
օրը պատրաստված էր տոնածառ՝ բացառապէս
Սև քաղաքի բնակիչների երեխաների—գլխա-
ւորապէս այնտեղի զարդաների և ճերմակների
խնամող ընկերութեան՝ այնտեղի էփանագին
ճաշարանի երեխաների համար:

Հարկւրից աւելի երկու սեռի ամեն դասա-
կարգի երեխաներ լցրել էին առաջիտօրիայի
դահլիճը: Ուրախ քրքիջներ, առողջ ծիծաղ,
անմեղ ժպիտ, ճնշվածի, զրկվածի անկունե-
րից այս ու այն կողմը ուղղված երկչոտ հայ-
նեաց—բոլորը միասին խառնվել էին և ստեղծել
մի նոր, զուարթ աշխարհ, որտեղ ամեն մէկը
հարկաւոր հոգսերի տակ ճնշված, մի բօպէ
կը մոռանար իրան և անմեղ երեխաների հետ
նրանց նման կը զուարճանար: Երեխաները
պարեցին, երգեցին, մի կուշտ զուարճացան,
ապա յարձակվեցին տոնածառի վրա, ցաւ ու
ցրել արին նրան մանկական անհամբերու-
թեամբ և աշխուժով, ստուցան իրանց նուէրնե-
րը, ապա քաղցրեղէն և ուրախ ու գոհ սրտով
ցրվեցին իրանց աները:

Նոյն օրը երեկոյեան առաջ խումբը ունէր
զբաղմունքներ—երաժշտական երեկոյ: Այս
սեզոնում երաժշտական երեկոյները աւելի յա-
ճախ են կրկնվում և մեծ աջողութիւն ունե-
ցում, մինչդեռ անցեալ սեզոնում ժողովուրդը
այնքան էլ սրտով չէր յաճախում երաժշտական
երեկոյներին: Այս տարվայ աջողութիւնը պէտք
է շնորհակալ նախ այն բանին, որ երաժշտա-
կան երեկոյները տարվում են զբաղմունքների
հետ խառն, և երկրորդ՝ որ հասարակութիւնը
կամաց-կամաց սովորում է երաժշտութեան:
Այդ երեկոյ երաժշտական բաժնում առանձին
աջողութիւն ունեցան թալալայկա անող խմբի
Գրիգորիսի ղեկավարութեամբ նուագած մի
քանի երաժիշակներ:

Ամսի 12-ին առաջ խումբը կրկին գեկ-
անաբերին մի անգամ արդէն ներկայացրած
«Каширская Старина»-ն:

Հետեւալ օրը, ամսի 13-ին, մի չոր տեսնու-

նախօսական մի բան է և մարդու հոգեկան
մշակումը քանի զարգացած՝ այնքան և նա լաւ
և համեմատական գեղարուեստ է ունեցել: Ուս-
տի գեղարուեստը ամեն ճշտութեամբ ցեղերու
և ազգերու ու ժամանակների զարգացման ա-
տիճանացողներից մէկն է:

Ամենաբարձր մշակում ունեցող քաղաքա-
կիրթ ազգերու գեղարուեստը յարաբերական
բարձրութեան վրա է:

Քաղաքապետական և զուտ գիտական բար-
ձրագոյնութիւնները դեռ ևս ազգերու իսկական
և ազնիւ բարձրացման նշանացոյցը չեն:

Հոսմայեցիք անօրինակ քաղաքական տիրա-
պետութիւն են ունեցել: Արմանք զարմանք է
նրանց ռազմագիտական և վարչական տաղան-
դը: Բայց նրանք իրենց ժամանակին ծանօթ
բոլոր աշխարհին կողոպտւում և ապա յաղթ-
վածներից ստացված հարկերու անսպաս հե-
ղեղով մեծատնացած, փարթամութեան մէջ
փքված, հպարտ խրոխտ՝ միշտ աւելի ստոր
են դառնում (իբր քաղաքակրթական զուտ և
ազնիւ բարձրութեան վրա կանգնած ազգ), քան
թէ նրանցից բնկալված և կոխտված ափ մը
հեղին ժողովուրդը: Տրիբուններու, զօրավար-
ների, կեանքներու ամբողջ կիսապատճառ
չարքը, իրեն ճառաւոր հողին՝ վրա—(Հոսմայե-
«terrarium dea» կասեն),—աւելի ստոր էր իսկա-
պէս: քան զօտով այնտեղ տարված ելլալուցի
գեղարուեստագէտ ժողովուրդը, որը չինում
էր նրանց կեանքի վայելքին համար ամեն

ված ոգևորութիւն էր տիրում առաջիտօրիայ-
ում: հայկական խումբը սարքել էր զբաղմուն-
կական-երաժշտական բաժին: Գլխաւոր հետա-
քըքութիւնը նրանումն էր, որ այդ օրը խա-
ղում էին մեր թատրոնի վետերան՝ Սաֆա-
ղեան ամուսինները՝ հայերէն—«Ընտանեկան փո-
թորիկ» և թուրքերէն—Մաղաթեանի «Բալլի վէ
դարդալ» (բոյր և եղբայր): Ի՞նչ ասել կուզէ,
որ ներկայացումը ամենայնօրեայից մէկն էր,
և Սաֆաղեան ամուսինների աննման խաղը
մեզ մի աւելորդ անգամ ափսոսալ տուեց, որ
մեր խճուղի բեմը զրկվել է այդպիսի ոյժերից:
Առանձին բաւականութիւն էին ստանում այդ
օրը առաջին անգամ այս սեզոնում թուրքերը,
որոնց կուշտ և լի ու լի բաւականութիւն տը-
ւեցին իրանց մտածած և աջող խաղով տիկ.
Սաֆաղեան (կեօր Սահար), պ. Սաֆաղեան
(Աղա Յէրալ) և պ. Աւետեան (Հասան):

Ամսի 19-ին առաջ խումբը խաղաց Օս-
արովսկու «Песнь» կամէդիան, որը քնն նմանու-
թիւն ունի նրա յայտնի «Անմեղ մեղաւորներին»:
Այս անգամ խաղին մասնակցում էին և նոր
ոյժեր, այնպէս որ ընդհանուր խաղը մի տէմ-
պէրամենտով չը գնաց, բայց ընդհանրապէս
աջող էր:

23-ին խաղում էին Սուսդուկեանցի «Խաթա-
բալան»: Այստեղ էլ նոր խաղացողներ կային.
օր. Նաւասարդեան (միանգամայն անաջող Գե-
թեան), տ. Տիգրանեան (թոյլ Մարգարիտ): Ե-
թէ զերեքը իմանային դուցէ փոքր ինչ ուրիշ
տեսակ խաղային Այս անգամ մոռացել էր դե-
րը սովորել պ. Հասան-Ջալալեան, որը չնոր-
քով է խաղում միշտ, բայց այս անգամ, չնոր-
հիւ այդ հանգամանքի, թոյլ անց կացրեց Ջա-
բախովի դերը: Պ. Մ. Մանուէլեան Մասի-
սեանցի դերին հէնց սկզբից բոլորովին աւելորդ
տեղը զբաղմունքով տուեց և այդպէս էլ շար-
նակեց մինչև վերջը: Այդ բոլորի երեսը պարզ
արեցին երեք հոգի. տ. Արտեմեան (աննման
Նատալիա), տ. Ա. Գալանթար (հրաշալի Սա-
մբրի) և պ. Զիթեան (նոյնպէս հրաշալի Բալայի):
Ամսի 26-ին առաջ խումբը ունէր երաժշ-
տական-զբաղմունքական երեկոյ: Խաղում էին
«По публикации» և ամսի 30-ին հայկական
խումբը ունէր նոյնպիսի երեկոյ—խաղում էին
«Фантастический сон» և «200,000»:

Անկարող լինելով ներկայ լինել այդ վերջին
երկու ներկայացումներին՝ հարաւորութիւն
չունեմ նրանց մասին խօսելու:

Ռ. Յովհաննիսեանց
Բագու

կերպ առարկաները, սովորեցնում էր այն կօ-
պիտ զինուորներին կեանքի իսկական և մար-
դալայի նպատակը, զբաղում էր ամեն կերպ
արհեստներով և ազգի մը կենսունակութեան
տեսականութեան իսկական գաղտնիքը պար-
զում Սարսափով և յալիտակութեան միջոցով
դիւրաւ հարստացած մեծ հոռմական ազգը,
ճոխութեանց վիճակին անխուսափելի հետե-
ւանքով՝ կորաւ գեղարուեստ, խնկնչութեան և
գինովութիւնից անսանային ապուշութեան վի-
ճակի հասած: Մինչդեռ փոքրիկ Ելլադան այ-
սօր զարձեալ սերունդներու սրտին տիրում է
աւելի միահեծան, աւելի տիրական և ճշմա-
րիտ, անկեղծ պատկառանք և սէր ներշնչող
թաղաւորութեամբ:

Ելլադան ծնող մայրն է մեր քաղաքակր-
թութեան, նա է դրել սկիզբը այսօրվան բո-
լոր գեղարուեստական, ուսումնական, գիտական
գործերու: Ելլադան անհուն բարձրութեան
տարել է զուտ գեղարուեստը, մանաւանդ ար-
ձանագործութիւնը և ճարտարապետութիւնը:
Հաղարաւոր տարիներ շարունակվող սերունդ-
ներ չի կրցան սրբաբեր կամ գերազանցել նը-
րանց ոճը, չի կրցան լաւագոյն բան մը հեղի-
նակել: Մեր ապրած 19-րդ դարի վերջին կէսը
իր բոլոր անհամեստ յաւակնութիւններով ա-
ւելի ստոր մնաց (գեղարուեստներում) քան
Պէրիկլեսի դարում: Ելլադան, ապառաժներէ,
քաղաքաւորներէ կազմված, ծովերու մէջ կո-
րած այն փոքրիկ երկրիւր, այն երկրի պղծը,

Электротечная Груз. Изд. Т-ва, В.-Ванская ул